ՀԱՂՈՐԴՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 20-24-րդ նիստերի վերաբերյալ (2008-2010թթ.)

2008թ. հուլիսից մինչև 2010թ. մարտն ընկած ժամանակաշրջանում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) նախաձեռնությամբ գումարվել է «Հայաստանի Հանրապետության դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 5 նիստ, որոնց ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել ու համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարին վերաբերող՝ առավել կարևոր հետևյալ հարցերը.

1. Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հետ կապված Հանձնաժողովը համակարգել է գնահատման նախապատրաստմանն ուղղված աշխատանքները (աշխատանքային խմբերի կազմում, հարցաշարի լրացում, նյութերի նախապատրաստում), գնահատման ընթացքում կազմակերպված հանդիպումները, իսկ գնահատման հաշվետվության հաստատումից հետո՝ դրա կատարումը: Այդ նպատակով կազմվել են համապատասխան գործողությունների ծրագրեր, որոնց իրականացման ընթացքն ու արդյունքները պարբերաբար քննարկվել և համաձայնեցվել են Հանձնաժողովում:

2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարության մշակման և ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծության շրջանակներում Հանձնաժողովի կողմից քննարկվել ու հաստատվել է այդ ոլորտում 2010-2013թթ. ազգային ռազմավարությունը: Հանձնաժողովի գիտությանն ու հաստատմանն է ներկայացվել նաև ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծության իրականացման մեթոդաբանությունը, որի հիման վրա իրականացված վերլուծության ամփոփ արդյունքները հրապարակվել են ՖԴԿ-ի կողմից: Բացի այդ, Հանձնաժողովի հավանությանն է արժանացել ՖԴԿ առաջարկը՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված ՀՀ տարբեր գերատեսչությունների և ՖԴԿ միջև միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծման վերաբերյալ, որի նպատակն է ապահովել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված պետական մարմինների տիրապետման ներքո առկա տեղեկատվական բազաների՝

իրական ժամանակի ռեժիմում փոխադարձ հասանելիության և նշված մարմինների ու ՖԴԿ-ի միջև պաշտպանված էլեկտրոնային կապուղիներով տեղեկատվության օպերատիվ փոխանակման ապահովումը:

3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքների համակարգման ու ամփոփման հետ կապված Հանձնաժողովն իր նիստերում քննարկել և հավանություն է տվել այդ ոլորտում 2008, 2009թթ. տարեկան գործունեության արդյունքներին: Առանձին անդրադարձ է կատարվել իրականացված ռազմավարական բնույթի աշխատանքներին՝ մասնավորապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի կայացմանն ուղղված օժանդակությանը, Էգմոնտ խմբի 2011թ. լիագումար նիստը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու նախաձեռնությանը, Իրանում ստեղծվելիք ֆինանսական հետախուզության մարմնի՝ Էգմոնտ խմբին անդամակցությանն օժանդակությանը, Թուրքմենստանում և Տաջիկստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ձևավորմանը ցուցաբերված օժանդակությունը:

4. Այլ հարցերից կարևորվում է Հանձնաժողովի կողմից համաձայնեցված ՀՀ պետական իրավասու մարմինների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու մասին որոշման նախագիծը, որն այդուհետ հաստատվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ու կատարման համար ներկայացվել է իրավասու մարմիններին: Հանձնաժողովի քննարկման են ներկայացվել նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված՝ «Արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման» կարգում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները, որոնց հիման վրա մշակվել են վերոնշյալ կարգում համապատասխան լրամշակումներ: